ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ ԱՐՓԻՆԵ ՄԵԽԱԿԻ

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ–2020

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, դոցենտ

Տիգրան Վլադիմիրի Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գրիգորի Արշալույսի Վահանյան

տնտեսագիտության թեկնածու

Կարապետ Հովհաննեսի Առաքելյան

Առաջատար կազմակերպություն՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի հուլիսի 7 -ին ժամը 13^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, քաղ. Երևան, Աբովյան փող. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թվականի մայիսի 25-ին:

Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,

տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ.Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավման գործում հրատապ խնդիրներից մեկը տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումն է, հատկապես սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համատեքստում:

Գործարար միջավայրի կառավարման սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումն անխուսափելի գործընթաց է, ինչը ենթադրում է վերանայել տնտեսության բոլոր հատվածներում գործող տնտեսական մեխանիզմներն ու լծակները: Այսպես, օրինակ, ՀՀ-ում անհրաժեշտ է բարեփոխումներ իրականացնել ՓՄՁ-ների հարկման դաշտում և տնտեսական քաղաքականության գործիքակազմի կառուցվածքում է, քանի որ ՓՄՁ-ների զարգացումն ինքնին ապահովում է սոցիալական նշանակություն ունեցող խնդիրների լուծում, ինչպիսիք են՝ քաղաքացիների զբաղվածությունը, ինքնազբաղվածությունը, ընտանեկան բիզնեսը:

ՀՀ գործարար միջավայրի բարելավման գործում անհրաժեշտ է վերանայել տնտեսության ոլորտներում իրականացվող տնտեսական մեխանիզմները, և առավելություններ սահմանելով այն ոլորտների համար, որոնք ապահովում են բարձր ավելացված արժեք, արտահանման դիվերսիֆիկացում և ներմուծման փոխարինում: Տնտեսական գործիքակազմի վերանայման արդյունքում անհրաժեշտ է մշակել մեխանիզմներ, որոնց միջոցով կարող է նվազեցվել ՀՀ-ում ստվերային բիզնեսը, մասնավորապես իրականացվի կազմակերպությունների ֆորմալացում ՝ ինչպես փոքր, այնպես էլ միջին և խոշոր, այդ թվում նաև՝ աշխատուժի, շրջանառության և հարկերի առումով: Պետք է նշել, որ դեռևս գոյություն ունեն այսպես կոչված, պետական կառավարման մարմինների և բիզնեսի «սերտաճման» խնդիրներ, որոնց պատճառով Հայաստանում գործարար միջավայրի բարելավում տեղի չի ունենում, քանի որ բախվում մեն օրինական հարկ վճարողների և «պետական հովանավորչական» հարկ վճարողների բիզնես շահերը, որի արդյունքում կորում է օրինական դաշտում գործող տնտեսվարող սուբյեկտների մոտիվացիան:

Բազմաթիվ հեղինակներ, այդ թվում նաև հայազգի և օտարազգի, իրականացրել են գործոնային վերլուծություն գործարար միջավայրի բարելավման,դրա գործոնների վերլուծության, հարկայի համակարգի, ներդրումային միջավայրի առումով, սակայն ատենախոսության նպատակներից մեկը ոչ թե առանձին ցույց տալ գործարար միջավայրի բարելավմանը նպաստող գործոնները,այլև այդ գործոնների համակարգման միջոցով ցույց տալ, թե դրանք ինչ ազդեցություն են ունենում կամ ունենալու բնակչության սոցիալ–տնտեսական զարգացման, կենսամակարդակի բարձրացման, պետության խնդիրների լուծման վրա: Պետք է նշել, որ գործարար միջավայրի գրավչությունը պայմանավորված է ոչ միայն հարկային համակարգով, այլև մակրոտնտեսական այնպիսի ցուցանիշներով, որոնք ուղղակի և անմիջական ազդեցություն են ունենում, օրինակ՝ արտահանման և ներմուծման ծավալների դինամիկայի, տրանսֆերտների, վարկային տոկոսադրույքների, ֆինանսական ռեսուրսների հասանելիության աստիճանի, իրավական համակարգի, ներդրողների շահերի պաշտպանվածության վրա, որոնք առավել անմիջական ազդեցություն են ունենում գործարար միջավայրի վրա, քան հարկերը:

Աշխատանքում իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն, որի միջոցով հենց հիմնավորվել են այդ յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը տնտեսական ակտիվության վրա, ինչն էլ իր հերթին նպաստում է գործարար ակտիվության բարձրացմանը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել գործարար միջավայրի կառավարման սոցիալ–տնտեսական հիմնախնդիրները և այդ նպատակի լուծման համար աշխատանքում դրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել գործարար միջավայրի կառուցվածքը և այն բնութագրող տարրերը,

- իրականացնել գործոնային վերլուծություն գործարար միջավայրի զարգացմանը նպաստող գործոնների վերաբերյալ,
- համեմատել գործարար միջավայրի զարգացմանը նպաստող գործոնները արտերկրում և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ–ում,
- համակարգել ՀՀ սոցիալ–տնտեսական գործընթացներում բարեփոխումները գործարար միջավայրի համատեքստում,
- մշակել տնտեսական զարգացման առաջնահերթությունների գնահատման մեխանիզմներ գործարար միջավայրի համատեքստում,
- համակարգել տնտեսության զարգացման և գործարար միջավայրի բարելավման գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ գործարար միջավայրն է, իսկ հետազոտության առարկան՝ գործարար միջավայրի կառավարման սոցիալ–տնտեսական հիմնախնդիրները:

Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել գործարար միջավայրի վերաբերյալ տարբեր տնտեսագետների հրապարակումները գրքերի ու գիտական հոդվածների ձևով:

Հետազոտությանն անհրաժեշտ տեղեկատվական հիմքերն են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, Ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, ԶԱԿ–ի, Համաշխարհային բանկի, «Doing Business» տարեկան զեկույցների, ՏՀԶԿ-ի կողմից հրապարակված զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական,համեմատական, էմպիրիկ, վերլուծության տնտեսաչափական մեթոդներ և գործիքներ:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Հետազոտության արդյունքում մշակվել և ստացվել են տեսական ու գործնական նշանակության արդյունքներ, որոնցից հիմնականները հետևյալներն են՝

1. ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների համակարգման արդյունքում բացահայտվել են գործարար միջավայրի զարգացմանը խոչընդոտող գործոններն ու տնտեսության իրական հատվածում առկա ռիսկերը՝ առաջարկվել է ենթակառուցվածքային բարեփոխումներ՝ դրանց նվազեցմանն ուղղված:
2. Գնահատվել է պարենամթերքի արտահանման և հարկային բեռի ազդեցությունը համախառն ներքին արդյունքի վրա և ուրվագծվել են պետություն-բիզնես-քաղաքացիական հասարակություն համագործակցության շրջանակների ընդլայման մոտեցումները:
3. ՀՀ-ում զբաղվածության մակարդակը բարձրացնելու նպատակով առաջարկվել են առավել բարձր արժեք ունեցող ոլորտներում (գյուղատնեսություն, հագուստի արտադրություն) գործարար ակտիվության խթանումը և այդ ոլորտներում ներմուծման փոխարինման քաղաքականության իրականացման մեխանիզմներ:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը: Ատենախոսությունը գիտական հետազոտություն է, որից բխող եզրակացությունները և հետևությունները կարող են օգտագործվել այս հիմնախնդիրներով զբաղվող բոլոր շահագրգիռ մարմինների կողմից, ինչպիսիք են՝ գործարար համայնքի, Ֆինանսների նախարարության, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, հարկային մարմինների և այս հիմնախնդիրներով զբաղվող հետազոտողների, ասպիրանտների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 8 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 133 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության նպատակն ու խնդիրները,հետազոտության օբյեկտն ու առարկան, ներկայացվել է գիտական նորույթը, ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը,տեսական և տեղեկատվական հիմքերը, փորձարկումներն ու հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության ծավան ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «**Գործարար միջավայրի դերը տնտեսության զարգացման գործում**» գլխում ներկայացված է գործարար միջավայր հասկացության բնորոշումները, գործարար միջավայրի զարգացմանը նպաստող գործոնային վերլուծությունն արտերկրում,ինչպես նաև վերջինիս տեղայնացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում:

Գործարար միջավայրը յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն է, որի զարգացումը հնարավորություն է ընձեռում մեղմելու անցումային տնտեսություններին բնորոշ տնտեսական և սոցիալական դժվարությունները՝ կայուն պայմաններ հետագա տնտեսական աճի համար:

ՀՀ-ում անկախության տարիներից հետո իրականացվել են բազնաբնույթ բարեփոխումներ, սակայն դեռևս առկա են բազմաթիվ թերություններ և բացթողումներ, ինչը նպաստում է նաև գործարարության ակտիվության նվազեցմանը:

Այսպիսով՝ գործարար միջավայրը հանդիսանալով տնտեսական, սոցիալական և քաղաքական բազմաբնույթ և տարատեսակ գործառույթներ իրականացնող ոլորտ, իր վրա կրում է բազմաթիվ գործոնների ազդեցությունը՝ մի կողմից հարմարվելով այդ գործոնների ազդեցությամբ ստեղծված նոր միջավայրին, իսկ մյուս կողմից՝ փորձելով վերափոխել այդ միջավայրը՝ առաջ մղել սեփական շահերը և հասնել առավելագույն արդյունքների, հետևաբար գործարար միջավայրի կառուցվածքի վերլուծությունից կարելի է նշել, որ գործարար միջավայրի զարգացման համար անհրաժեշտ է ապահովել ներքին և արտաքին միջավայրերի և դրանց գործոնների միջև փոխհամաձայնեցվածություն[1]:

Որպես գործարար միջավայրի վրա ազդող գործոններ կարելի է դիտարկել «Doing Business»–ի կողմից մշակված գործարարությամբ զբաղվելու հիմնական ցուցանիշները, որոնք սահմանում են որևէ երկրում բիզնես սկսելու և վարելու դյուրինության աստիճանը: Հայաստանում, ըստ «Doing Buiness»-ի զեկույցի 2008-2017թթ առավել դյուրին են դարձել էլեկտրականության միացումը,վարկերի հասանելիությունը և պայմանագրերի կիրառումը **(տես՝ աղյուսակ 1-ը):**

[1] Романенко Е.В. Особенности развития и взаимодействия малого, среднего и крупного пред- принимательства [Текст] / Е.В. Романенко // Вестник СибАДИ. – 2011. – № 3(21). – С. 65-68.

Աղյուսակ 1

«Doing Buainess»-ի զեկույցներում Հայաստանի Հանրապետության ցուցանիշները 2008-2017թթ[2]

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Բիզնես սկսելու մեկնարկային պայմանները	84.77	84.97	90.4	94.3	94.8	94.86	97.5	97.8	72.2	73.6
Սեփականության գրանցում	92.95	93.17	93.3	92.8	92.9	92.96	93	93	87.3	87.4
Հարկերի վճարումներ	40.53	40.62	40.6	40.6	53.6	71.42	74.5	82.1	72.5	72.5
Շինարարության թույլտվության տրամադրում	59.7	63.92	65.3	64.7	74	73.7	73.6	73.8	69.9	70
Վարկերի հասանելիություն	68.75	68.75	68.8	68.8	75	75	65	65	65	75
Միջազգային առևտուր վարելու դյուրինություն	61.36	56.81	56	64	63.9	64.68	64.5	68.8	86.5	86.5
Էլեկտրականության միացում			49.5	49.3	49.4	55.98	64	64	70	73.2
Ներդրողների պաշտպանվածություն	50	50	50	50	50	63.33	60	60	60	60
Պայմանագրերի կիրառում	58.2	59.24	59.2	59.2	51.5	51.45	53.3	53.3	67.9	69.7
Անվճարունակության հարցերի կարգավորում	–	–	–	–	–	–	–	–	46.4	46.1

Չնայած դրական փոփոխությունների, հանրապետությունում դեռևս գոյություն ունեն բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք կաշկանդում են գործարար միջավայրի զարգացմանը **(տես՝ գծապատկեր 1-ը):** Ի թիվս դրանց, կարելի է ընդգծել շինարարության թույլատվության տրամադրման, միջազգային առևտուր վարելու դյուրինության, հարկերի վճարումների, սեփականության գրանցման, ներդրողների շահերի պաշտպանության հետ կապված խնդիրները, որոնք պայմանավորված են նաև կոռուպցիոն ռիսկերով, ստվերային տնտեսությամբ, գործազրկության բարձր մակարդակով, եկամուտների անհավասարաչափ բաշխմամբ, հարկային վարչարարությամբ և քաղաքական դիրքորոշմամբ, անհավասար մրցակցային պայմաններով, ուստի Մերձ Բալթյան, ԱՊՀ և ԵԱՏՄ անդամ երկրների հետագա ռազմավարությունը պետք է ուղղված լինի հարկային քաղաքականության համաձայնեցմանը, ազգային տնտեսությունների խթանմանը , այդ թվում հարկային օրենսդրության բարելավմանը՝ հաշվի առնելով հարկային ինքնիշխանությունն և իրավաբանական անձանց մրցակցությունը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Գործարար միջավայրի արդյունավետ կառավարման մեխանիզմների գնահատման մոտեցումները ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում»** գլխում ներկայացված են գործարար միջավայրի վրա ազդող կառավարման մեխանիզմները, ինչպես նաև՝ համակարգվել են ՀՀ սոցիալ–տնտեսական գործընթացներում ինստիտուցիոնալ բարեփոխումները գործարար միջավայրի համատեքստում:

Գործարար միջավայրի բարելավումը առաջին հերթին պայմանավորված է տնտեսության ներսում տեղի ունեցող գործընթացներով, որոնց արդյունավետ կառավարումը նպաստում է գործարար ակտիվության բարձրացմանը և տնտեսության զարգացմանը:

[2] Հիմք է ընդունվել «Գործարարությամբ զբաղվելը աշխարհում» զեկույցի տվյալները 2008-2017թթ, http://www.doingbusiness.org/data:



Գծապատկեր 1. Գործարար միջավայրին բնորոշ հիմնախնդիրները[3]

Պետք է նշել, որ ինչպես զարգացած, այնպես էլ հետանցումային բոլոր երկրներում գերակա խնդիրներից մեկը ՓՄՁ-ների խթանումն է , իսկ տնտեսական գործընթացներում կատարվող շարունակական բարեփոխումների նպատակներից մեկը ՓՄՁ-ների ավելացումն է, քանի որ աշխարհի բոլոր երկրներում հարկային եկամուտների գերակա մասը ապահովում են ՓՄՁ-ները:

ՀՀ-ում դեռևս գոյություն ունեն վարչարարական բազմաթիվ խնդիրներ, որոնք կաշկանդում են գործարար միջավայրի զարգացմանը, հետևաբար՝ այդ խնդիրների լուծումները կստեղծեն այնպիսի հնարավորություններ, ինչպիսիք են՝ ընդհանուր շուկայի ձևավորումը, ներքին արտադրողի շահերի պաշտպանությունը,տեղական արտադրության խթանումը, նոր աշխատատեղերի ավելացումը, արտագաղթի կրճատումը,որոնք էլ նպաստավոր պայմաններ կստեղծեն գործարար միջավայրի հետագա զարգացմանը:

ՀՀ–ում գործարար միջավայրը բարենպաստ չէ, որի արդյունքում ՓՄՁ սուբյեկտների քանակն՝ըստ գործունեության տեսակների գնալով նվազում է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 8 տարվա կտրվածքով, 2018 թվականին 2017 թվականի համեմատ դրանց թիվը

[3] Գծապատկեր 1-ը կազմվել է հեղինակի կողմից:

մեծածախ և մանրածախ առևտրում ավելացել է 3910–ով կամ 1.09 տոկոսային կետով, մշակող արդյունաբերությունում՝ 970-ով կամ 1.16 տոկոսային կոտով, շինարարությունում՝ 293-ով կամ 1.23 տոկոսային կետով և այլն **(տես՝ աղյուսակ 2-ը)**:

Աղյուսակ 2.

2010-2018թթ. ՀՀ ՓՄՁ սուբյեկտների քանակն՝ ըստ գործունեության տեսակների[4]

Տնտեսության ոլորտներ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	435	525	551	552	485	497	467	580	567
Հանքագործական արդյունաբերություն	290	330	356	350	339	308	334	234	314
Մշակող արդյունաբերություն	5033	5795	6061	6012	6491	6757	6905	5771	6741
Շինարարություն	1243	1350	1420	1400	1385	1420	1470	1224	1517
Մեծածախ և մանրածախ առևտուր	35750	41114	43376	43376	43628	45004	46810	40183	44093
Փոխադրումներ և պահեստային տնտեսություններ	1908	2472	3772	3727	2573	1303	1229	1739	1016
Կացություն և հանրային սննդի կազմակերպում	2212	2680	2823	2820	2902	3126	3261	2559	4053
Տեղեկատվություն և կապ	1075	1263	1360	1360	1482	1556	1724	1636	2161
Կրթություն	321	367	400	420	512	523	458	474	488
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	1176	1270	1345	1350	1318	1152	1134	1065	1971

ՓՄՁ–ների քանակին զուգընթաց ավելացել է նաև նրանց շրջանառության ծավալները, այսպես, օրինակ՝ 2018 թվականին 2017 թվականի համեմատ շրջանառության ծավալները մեծածախ և մանրածախ առևտրում ավելացել է 450686 մլն. դրամով կամ 1.19 տոկոսային կետով, հանքագործական արդյունաբերության ոլորտում՝ 24651 մլն. դրամով կամ 1.07 տոկոսային կոտով, շինարարության ոլորտում ՓՄՁ սուբյեկտների շրջանառության ծավալները ավելացել են 18240 մլն դրամով կամ 0.05 տոկոսային կոտով **(տես՝ աղյուսակ 3-ը)**:

Աղյուսակ 3.

2010-2018թթ. ՀՀ ՓՄՁ սուբյեկտների շրջանառության ծավալները գործունեության տեսակների (մլն. դրամ)[5]

Տնտեսության ոլորտներ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	14525	20926	21315	21320	20443	21554	19969	25606	26148
Հանքագործական արդյունաբերություն	9349	9866	8868	8860	12107	10139	11424	340374	365025
Մշակող արդյունաբերություն	175250	185907	191405	191420	200354	207468	218496	1158737	1063118
Շինարարություն	148484	161649	144040	144020	137228	139855	135651	335602	353842
Մեծածախ և մանրածախ առևտուր	565362	624112	724440	724000	781408	786823	867413	2347912	2798598
Փոխադրումներ և պահեստային տնտեսություններ	43487	52027	63699	63690	50202	49553	55151	219378	271962
Կացություն և հանրային սննդի կազմակերպում	36794	37565	46437	46430	37077	44538	75342	116040	148256
Տեղեկատվություն և կապ	39070	42185	46684	46680	50939	53235	65435	222326	296998
Կրթություն	6524	6576	5451	5410	7116	8386	9190	7283	9776
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	36116	41889	46000	46020	37381	41248	77645	80267	85444

ՓՄՁ–ների շրջանառության ծավալներին զուգընթաց նվազել է հանքագործական արդյունաբերության ոլորտի սուբյեկտների կողմից մուծած հարկերը՝ 414 մլն. դրամով կամ 0.88 տոկոսային կետով, սակայն մեծածախ և մանրածախ առևտրի (16315 մլն. դրամով կամ

[4] Հայաստանի փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոն, էջ՝ 7 https://www.smednc.am/files/pdfs/attachments/original/501749ff43.pdf,Հայաստանի Հանրապետության Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝ http://mineconomy.am/hy/449, ՀՀ վիճակագրական կոմիտե՝ «Հրապարակումներ» 2018թ., 2019թ. էջեր՝ 6, 6 https://www.armstat.am/file/article/arm_print_version+.pdf, https://www.armstat.am/file/article/sme__bul_2019_arm_2019.pdf:

[5] Հայաստանի փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոն, էջ՝ 15 https://www.smednc.am/files/pdfs/attachments/original/501749ff43.pdf , Հայաստանի Հանրապետության Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝ http://mineconomy.am/hy/449, ՀՀ վիճակագրական կոմիտե՝ «Հրապարակումներ» 2018թ., 2019թ. էջեր՝ 9, 9 https://www.armstat.am/file/article/arm_print_version+.pdf, https://www.armstat.am/file/article/sme__bul_2019_arm_2019.pdf:

1. 12 տոկոսային կետով), շինարարության (2283 մլն. դրամով կամ 1,06 տոկոսային կետով) և մշակող արդյունաբերության (1116 մլն. դրամով կամ 1,01 տոկոսային կետով) ոլորտներում ավելացել են **(տես՝ աղյուսակ 4-ը)**:

Աղյուսակ 4.

2010-2018թթ. ՀՀ ՓՄՁ սուբյեկտների կողմից մուծած հարկերը գործունեության տեսակների (մլն. դրամ)[6]

Տնտեսության ոլորտներ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	1848	1755	2121	2012	2743	2306	1465	1640	1560
Հանքագործական արդյունաբերություն	2414	3005	3633	3600	3435	2602	1109	3614	3200
Մշակող արդյունաբերություն	25841	26487	29037	29030	27417	31095	63586	67301	68417
Շինարարություն	30804	31890	33500	33520	29429	28086	32062	34529	36812
Մեծածախ և մանրածախ առևտուր	52675	55723	63988	63900	72821	93632	114162	127286	143601
Փոխադրումներ և պահեստային տնտեսություններ	6863	7519	8245	8240	10351	8038	8259	8140	9514
Կացություն և հանրային սննդի կազմակերպում	7590	8361	9374	9379	9159	9651	11412	15392	15204
Տեղեկատվություն և կապ	9259	9236	11014	12016	12402	13687	14409	18603	19148
Կրթություն	1572	1588	1617	1642	2597	2756	1727	2465	2734
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	6744	7403	7763	7755	8624	8610	16483	15295	15549

Ինչպես ցույց են տալիս **գծապատկեր 2**-ի տվյալները, 2017 թվականը նախորդ տարվա նկատմամբ, չնայած վարկերի տրամադրման տոկոսադրույքը բարձրացել է 18.05 տոկոս, այնուամենայնիվ առևտրային բանկերի կողմից տրամադրվող ընդհանուր վարկերի ծավալները ավելացել են 64347 մլն դրամով**(տես՝ աղյուսակ 5-ը)**, հետևաբար վարկեր/ՀՆԱ ցուցանիշը աճել է 1.55 տոկոս, միաժամանակ հարկային բեռը նվազել է 5.92 տոկոս,իսկ տրանսֆերտներ/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 8.97 տոկոս, հետևաբար ՀՀ տնտեսության աշխուժացման համար էական նշանակություն ունի վարկավորման տոկոսադրույքի սահմանումը, հատկապես վերջինիս նվազեցումը կբերի սոցիալական խնդիրներ լուծման, կխթանի նոր բիզնես ծրագրերի իրականացմանը:



Գծապատկեր 2. 2004-2017թթ. վարկեր/ՀՆԱ, տրանսֆերտներ/ՀՆԱ և հարկային բեռի շարժընթացը (%)[7]

[6] Հայաստանի փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոն, էջ՝ 18 https://www.smednc.am/files/pdfs/attachments/original/501749ff43.pdf , Հայաստանի Հանրապետության Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝ http://mineconomy.am/hy/449, ՀՀ ՎԿ https://www.armstat.am :

[7] ՀՀ Վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2006թ.,2010թ.,2017., Հայաստանի ֆինանսների վիճակագրություն՝ «դրամավարկային միջնորդության համակարգի հիմնական ցուցանիշներ».էջեր՝79,41,48 http://www.armstat.am/file/article/finansner_07_3.pdf, http://www.armstat.am/file/article/finansner_11_5,6.pdf, http://www.armstat.am/file/article/finansner_2017_3.pdf : Հրապարակումներ՝ «Հայաստանի ազգային հաշիվներ»՝ հատվածային հաշիվներ http://www.armstat.am/file/article/hah_08_5.pdf, http://www.armstat.am/file/article/hah_11_7-12.pdf, http://www.armstat.am/file/article/hah_14_7+.pdf, http://www.armstat.am/file/article/hah_17_9.pdf, Հայաստանի Հանրապետության հարկային ծառայություն՝ http://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTIY2017:

Աղյուսակ 5.

2004-2017թթ. ընդհանուր վարկերի, մեկ շնչին ընկնող վարկի և տոկոսադրույքի շարժընթացը ՀՀ-ում (մլն դրամ)[8]

	Ընդհանուր վարկեր	Հարկային եկամուտներ	Մեկ շնչին ընկնող վարկ	Մեկ շնչին ընկնող հարկային եկամուտ	Միջին տոկոսադրույք
2004	143506	257520	0.04465028	0.08012446	18.2
2005	194871	312316	0.06056597	0.09706791	17.3
2006	243580	375537.2	0.07562013	0.1165866	17.2
2007	426150	494420.8	0.1320781	0.1532375	16.5
2008	634495	739476.8	0.1961951	0.228657	16.5
2009	735200	642824.3	0.2266547	0.1981762	18.8
2010	949772	718348.3	0.2916901	0.2206162	18.9
2011	1268789	796960.4	0.3881869	0.2438306	17.7
2012	1605680	898415.9	0.5309613	0.2970854	16.0
2013	1798255	1022053	0.5950546	0.3382041	15.0
2014	2188357	1087379	0.7261122	0.3607998	16.3
2015	2119513	1091679	0.7054227	0.3633359	15.4
2016	2436081	1104243	0.8141166	0.3690281	14.4
2017	2500428	1044984	0.8356207	0.3492243	17.0

2015-2017թթ.առևտրային բանկերի կողմից վարկավորման ծավալները բարձր են եղել հատկապես արդյունաբերության ՝ միջինը կազմելով 401428.6 մլն դրամ, առևտրի՝ 365142.2 մլն դրամ և շինարարության՝ 170416.9 մլն դրամ ոլորտներում:



Գծապատկեր 3. 2004-2017թթ ՀՀ տնտեսության ոլորտների համախառն ավելացված արժեքը (մլն դրամ)[9]

[8] ՀՀ Վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2006թ.,2012թ.,2015թ.,2017թ., էջեր 385,377,375,383,http://www.armstat.am/file/doc/488.pdf, ,http://www.armstat.am/file/doc/99471508.pdf,http://www.armstat.am/file/doc/99493848.pdf, http://www.armstat.am/file/doc/99504418.pdf: Հայաստանի ֆինանսների վիճակագրություն՝ «դրամավարկային միջնորդության համակարգի հիմնական ցուցանիշներ», էջեր՝ 79,41,48 http://www.armstat.am/file/article/finansner_07_3.pdf http://www.armstat.am/file/article/finansner_11_5,6.pdf, http://www.armstat.am/file/article/finansner_2017_3.pdf,ՀՀ Կենտրոնական բանկ՝ https://www.cba.am/am/sitepages/default.aspx, Հայաստանի Հանրապետության հարկային ծառայություն՝ http://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTIY2017:

[9] ՀՀ Վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2007թ., 2008թ.,2010թ.,2013թ.,2017թ, «Ազգային հաշիվների համակարգ» էջեր՝ 217-222, 220-223,243-246, 242-247,245-250 http://www.armstat.am/file/doc/99450523.pdf http://armstat.am/file/doc/99456328.pdf,http://armstat.am/file/doc/99461748.pdf, http://www.armstat.am/file/doc/99477463.pdf, http://armstat.am/file/doc/99504388.pdf, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ՝ https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx:

Անդրադառնալով ոլորտների համախառն ավելացված արժեքին, ապա հարկ է արձանագրել, որ 2015-2017թթ արդյունաբերության ոլորտի այս ցուցանիշը միջինում կազմել է 805098.2 մլն դրամ, առևտրի ոլորտում՝ 551484.5 մլն դրամ, իսկ շինարարության ոլորտում՝ 454102.5 մլն դրամ **(տես՝ գծապատկեր 3-ը)**, սակայն նույն ժամանակահատվածում ծառայության և գյուղատնտեսության ոլորտների համախառն ավելացված արժեքները միջինում կազմել են 980327.9 մլն դրամ և 850526.5 մլն դրամ:

Հետևաբար՝ ՀՀ-ում դեռևս գոյություն ունեն ոլորտներին տրամադրված առևտրային բանկերի վարկավորման հետ կապված խնդիրներ, մասնավորապես, առևտրային բանկերը 2015-2017 թթ վարկավորել են արդյունաբերության, առևտրի և շինարարության ոլորտները, սակայն վերջիններիս համախառն ավելացված արժեքները ցածր են եղել այն ոլորտներից՝ ծառայություն, գյուղատնտեսություն, որոնց առևտրային բանկերը չեն վարկավորել, հետևաբար թվարկված ոլորտների վարկավորումը եղել է աննպատակ և այդ ոլորտների կողմից թողարկված ապրանքները եղել են ոչ մրցունակ:

Ատենախոսության երրորդ՝ **«Գործարար միջավայրի բարելավման և տնտեսական առաջնահերթությունների զարգացման գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում ներկայացվել են ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները, ինչպես նաև բացահայտվել են համախառն ներքին արդյունքի վրա ազդեցություն ունեցող գործոնները, վերջիններիս ազդեցությունը ներկայացնելու համար մշակվել է ռեգրեսիոն հավասարում:

2005-2018թթ Հայաստանում տնտեսական աճի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ինչպես նվազել է, այնպես էլ՝ աճել,մասնավորապես համախառն ներքին արդյունքի իրական աճի բարձր ցուցանիշը գրանցվել է 2005 թվականին՝14.1 %,իսկ ամենացածրը 2009-ին՝-14.1%, **(տես՝ գծապատկեր 4-ը),** այնուհետև 2010 թվականից նկատվում է այդ ցուցանիշի որոշակի աճ մինչև 2015 թվականը: Սկսած այդ թվականից կրկին նկատվում է այդ ցուցանիշի նվազում,վերջինս էլ վկայում է տնտեսության զարգացման տեմպերի դանդաղեցման մասին,սակայն 2017 թվականին գրանցված այս ցուցանիշի աճը՝7.5%, չի բերել բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:



Գծապատկեր 4. 2005-2018թթ. տնտեսական աճը Հայաստանում (%) [10]

Աշխատանքում մշակվել և առաջարկվել է ռեգրեսիոն բանաձև, որը գործնականում հաշվարկվել է համախառն ներքին արդյունքի, պարենամթերքի արտահանման և հարկային բեռի ցուցանիշների համար՝

[10] ՀԲ-ի «World DataBank World Development Indicators» առցանց տվյալների բազա. http://databank.worldbank.org/data/views/variableselection/selectvariables.aspx?source=world-development-indicators:

$$Y=a_0+a_1EX_a + a_2TB+ \varepsilon_t \quad (1)$$

որտեղ՝

Y –համախառն ներքին արդյունքն է (այսուհետև՝ ՀՆԱ, մլն դրամ)

EXa – պարենամթերքի արտահանումն է (մլն դրամ)

TB – հարկային բեռն է (որը հաշվարկվել է հարկեր/ ՀՆԱ հարաբերակցությամբ)

a_0, a_1, a_2,– հաստատուն մեծության և անկախ փոփոխականների էլաստիկության գործակիցներն են

ε_t –պատահական սխալի մեծությունն է:

Աղյուսակ 6.

1997-2018թթ համախառն ներքին արդյունքի,պարենամթերքի արտահանման և հարկային բեռի գնահատված մոդելի արդյունքները [11]

	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
a(0)	7.723782	0.482913	15.99415	0.0000
a(1)	0.589499	0.036293	16.24291	0.0000
a(2)	-0.365368	0.126051	-2.898582	0.0092

R-squared	0.933193	Mean dependent var	14.75036
Adjusted R-squared	0.926161	S.D. dependent var	0.656378
S.E. of regression	0.178360	Akaike info criterion	-0.483905
Sum squared resid	0.604432	Schwarz criterion	-0.335126
Log likelihood	8.322950	Hannan-Quinn criter.	-0.448857
F-statistic	132.7014	Durbin-Watson stat	0.453506
Prob(F-statistic)	0.000000		

Վերլուծության համար կդիտարկվեն 1997-2018թթ. վերոնշյալ ցուցանիշների տարեկան պաշտոնական վիճակագրական տվյալները:

Նշված մոդելը գնահատվել է փոքրագույն քառակուսիների եղանակով՝ Eviews 9[12] համակարգչային ծրագրային հնարավորությունից, տվյալները համահարթեցվել են, ուստի այդ նպատակով տվյալները լոգարիթմվել են՝ կեղծ բազմագործոն գծային ռեգրեսիայից խուսափելու համար: Մոդելի գնահատման արդյունքները ներկայացված են աղյուսակ 6–ում:

Արդյունքում՝ (1) տնտեսաչափական մոդելի և մաթեմատիկական գործիքակազմի կիրառության միջոցով տրվել է տնտեսագիտական հիմնավորում.

1. Գյուղատնտեսության ոլորտում արտահանման ծավալները (EXa) ավելացնում են համախառն ներքին արդյունքի (Y) 0.58 տոկոսային կետի չափով:
2. Ներկայացված անկախ փոփոխականներից հարկային բեռն (TB) ունեցել է բացասական ազդեցություն համախառն ներքին արդյունքի (Y) վրա 0.36 տոկոսային կետի

[11] Հաշվարկվել է հեղինակի կողմից Eviews- էկոնոմետրիկ մեթոդի ուղեցույցի օգնությամբ:

[12] Eviews-ը հանդիսանում է Micro TSP փաթեթի Windows տարբերակը, որը պարունակում է զարգացած «հուշում» (help),որն, ըստ էության,էկոնոմետրիկ մեթոդների ուղեցույց է: Eviews- ի մասին մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ հետևյալ էլ.հասցեում ՝ http://www.eviews.com/home.html :

չափով, վերջինիս բացասական ազդեցությունը բացատրվում է նրանով, որ գյուղատնտեսության ոլորտը բավականին խնդիրներ ունի կապված պետական աջակցման անբավարար մեխանիզմների զարգացվածության առումով:

Ենթակառուցվածքների թերզարգացվածությունը, գյուղատնտեսական կոլեկտիվների ոչ մասսայականությունը, ֆինանսավորման մեխանիզմների անհասանելիությունը, բնակլիմայական պայմանները, ապահովագրական պայմանների բացակայությունը կամ թանկ լինելու գործոնները բերում են գյուղատնտեսական ոլորտի ոչ շահութաբեր լինելու հանգամանքին,թեպետ այս ոլորտը հարկերից ազատված է կամ գործում է հարկային արտոնություններ, ինչն էլ նաև հիմնավորվել է հաշվարկներով հարկային բեռի մեկ տոկոս կետի փոփոխությունը բերել է համախառն ներքին արդյունքի (Y) 0.36 տոկոսային կետի նվազման, հետևաբար՝ անհրաժեշտ է իրականացնել հասցեական միջոցառումներ, որոնք նոր հարթակներ կձևավորեն պետություն–բիզնես–քաղաքացիական հասարակություն արդյունավետ համագործակցության համար (**տես՝ գծապատկեր 5-ը**):



Գծապատկեր 5. Պետություն–բիզնես–քաղաքացիական հասարակություն համագործակցությունը[13]

Գործարար միջավայրի վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են փոխարժեքով պայմանավորված արտահանումը և ներմուծումը:

2018 թվականին նախորդ տարվա նկատմամբ փոխարժեքով պայմանավորված ներմուծման և արտահանման ծավալները նվազել են՝ 302925,4 մլն դրամով և 828423 մլն դրամով(**տես՝ գծապատկեր 6-ը),** վերջինիս նվազման պատճառ է հանդիսացել այդ ժամանակահատվածում դրամ/դոլար փոխարժեքային կուրսերի տատանումները, ինչը առավել շահեկան է դարձրել ոչ թե ապրանքների արտահանումը, այլ դրանց ներմուծումը, այսինքն՝ «էժանացված դոլարային հոսքերի պայմաններում», երբ համաշխարհային շուկայում

[13] Կազմվել է հեղինակի կողմից

տեղի են ունեցել ապրանքների գների իջեցում, այն նպաստել է, որ հայ գործարարները ապրանքներ ներմուծեն ՀՀ՝ դրանք առավել բարձր գնով վաճառելու ակնկալիքով:



Գծապատկեր 6. 2006-2018թթ. արտահանման, ներմուծման և փոխարժեքի շարժընթացը ՀՀ-ում (մլն դրամ)[14]

Այսպիսով՝ արտահանման նվազման միտումը պայմանավորված է եղել այդ ժամանակահատվածում դրամ/դոլար փոխարժեքային կուրսերի տատանումներով, որն էլ հանգեցնում է այն հետևությանը, որ արտահանումը ՀՀ տնտեսության վրա նշանակալի ազդեցություն դեռևս չունի:



Գծապատկեր 7. 2004-2017 թթ հարկային բեռի դինամիկան ՀՀ-ում (%)[15]

Ատենախոսությունում վերլուծվել է ՀՀ հարկային բեռը (**տես՝ գծապատկեր 7-ը),** իհարկե, ինքնին հարկային բեռի մակարդակը ցածր է, ինչը հնարավոր է բացատրել 2 առումներով. առաջին հերթին ցածր հարկային բեռը նպաստում է գործարար միջավայրի ակտիվության բարձրացմանը, երկրորդ՝ այն ունի իր բացասական ազդեցությունը, քանի որ պետության եկամուտների համալրման 80 տոկոսից ավելին կազմում են հարկային եկամուտները, իսկ դա

[14] ՀՀ Վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ՝ «Հայաստանի ազգային հաշիվներ» էջեր՝ 56,59,69 https://www.armstat.am/file/article/hah_12_6.pdf, https://www.armstat.am/file/article/hah_16_6.pdf, https://www.armstat.am/file/article/hah_18_6.pdf, ՀՀ Կենտրոնական բանկ՝ https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx:

[15] ՀՀ Վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ՝. «Հայաստանի ազգային հաշիվներ» `«Ազգային հաշվների հիմնական ցուցանիշներ» էջեր՝ 27, 35 http://armstat.am/file/article/hah_14_2+.pdf, http://armstat.am/file/article/hah_17_2.pdf, ՀՀ Կենտրոնական բանկ՝ https://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx, Հայաստանի Հանրապետության հարկային ծառայություն՝ http://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTIY2017:

նշանակում է, որ ինչքան շատ են պետական բյուջեում հարկային եկամուտների մակարդակը, պետությունը այդքան չափով կարողանում է լուծել սոցիալ-տնտեսական խնդիրներ:

Աշխատանքում վերլուծվել և գնահատվել է զբաղվածության և տնտեսական ակտիվության մակարդակների կապը և որպես կանխատեսման մեթոդ է կիրառվել max-min-ը, քանի որ դիտարկված ցուցանիշները երկուսն են՝

$$Y= a + bx \quad (2)$$

որտեղ՝

Y- զբաղվածության մակարդակ (%)

X- տնտեսական ակտիվության մակարդակ (%)

a- հաստատուն մեծություն

b- փոփոխական(լրացուցիչ) մեծություն

Համաձայն այդ մեթոդի տնտեսական ակտիվության մակարդակի լրացուցիչ 1.7% ավելացումը կարող է բերել զբաղվածության մակարդակի 27.04 տոկոսային կետի ավելացման, այսինքն՝տնտեսական ակտիվության մակարդակի հետագա բարձրացումը կբերի բնակչության սոցիալ- տնտեսական խնդիրների լուծման:

Աշխատանքում վերլուծվել են ՀՀ արտահանումը և ներմուծումն՝ ըստ ապրանքային խմբերի և արձանագրվել է, որ տրիկոտաժե հագուստ մեքենայական կամ ձեռքի գործվածք և կոշիկ, զուգագուլպաներ ապրանքախմբերի ներմուծումը գերազանցում է այս ապրանքախմբերի գծով արտահանմանը, հետևաբար՝ աշխատանքում առաջարկվել է իրականացնել ներմուծման փոխարինում այս ապրանքների գծով:



Գծապատկեր 8. 2010-2017թթ հագուստի արտադրության ծավալի, հագուստի ներմուծման ծավալի, օտարերկրյա ներդրումների և փոխարժեքի դինամիկան ՀՀ–ում (մլն դրամ)[16]

[16] ՀՀ Վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ՝«Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական վիճակը հունվար-փետրվար»2012թ.,2013թ.,2014թ.,2015թ.,2017թ.,2018թ. էջեր՝87,85,93,87,78,88,http://armstat.am/file/article/sv_02_12a_420.pdf, http://armstat.am/file/article/sv_02_13a_420.pdf, http://armstat.am/file/article/sv_02_14a_420.pdf, http://armstat.am/file/article/sv_02_15a_420.pdf, http://armstat.am/file/article/sv_02_17a_420.pdf, https://www.armstat.am/file/article/sv_02_18a_420.pdf, Հրապարակումներ՝«Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական վիճակը հունվար-նոյեմբեր» 2012թ.,2013թ.,2014թ.,2015թ.,2016թ.,2017թ.,էջեր՝13,13,13,12,11,11 https://www.armstat.am/file/article/sv_11_12a_121_.pdf,https://www.armstat.am/file/article/sv_11_13a_121.pdf, https://www.armstat.am/file/article/sv_11_14a_121.pdf, https://www.armstat.am/file/article/sv_11_15a_121.pdf, https://www.armstat.am/file/article/sv_11_16a_121.pdf, https://www.armstat.am/file/article/sv_11_17a_121.pdf:ՀՀ Կենտրոնական բանկ՝ https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx:

Վիճակագրական տվյալների հիման վրա վերլուծվել են փոխարժեքի, օտարերկրյա ներդրումների, հագուստի արտադրության և հագուստի ներմուծման ցուցանիշները:

2017 թվականին նախորդ տարվա նկատմամբ հագուստի ոլորտում օտարերկրյա ներդրումները ավելացել են 203.1 մլն դրամ, վերջինիս ավելացումը բերել է տեղական արտադրանքի ավելացմանը՝ 4408.8 մլն դրամով, սակայն նույն ժամանակահատվածում դրամ/դոլար փոխարժեքային կուրսերի տատանումները առավել շահեկան է դարձրել համաշխարհային շուկայից հագուստի ներմուծման ծավալների ավելացումը (**տես՝ գծապատկեր 8-ը),**

Կատարված վերլուծության արդյունքների հիման վրա մշակվել է հագուստի ոլորտում գործարար միջավայրի զարգացման ալգորիթմը, որը մանրամասն ներկայացվել է ատենախոսության երրորդ գլխում:

Ատենախոսության հիմնական արդյունքները ամփոփվել են «**Եզրակացություններ»** բաժնում, և՝ որոնցից հիմնականները ներկայացված են ստորև՝

1. ՀՀ-ում դեռևս գոյություն ունեն վարչարարական բազմաթիվ խնդիրներ, որոնք կաշկանդում են գործարար միջավայրի զարգացմանը,վերջիններս հանդիսանում են շինարարության թույլատվության տրամադրումը, միջազգային առևտուր վարելու դյուրինությունը, հարկերի վճարումների, սեփականության գրանցման, ներդրողների շահերի պաշտպանության հետ կապված խնդիրները, որոնք պայմանավորված են նաև կոռուպցիոն ռիսկերով, ստվերային տնտեսությամբ, գործազրկության բարձր մակարդակով, եկամուտների անհավասարաչափ բաշխմամբ, հարկային վարչարարությամբ և քաղաքական դիրքորոշմամբ, անհավասար մրցակցային պայմաններով,որոնց արդյունքներում առաջարկվել է Մերձ Բալթյան, ԱՊՀ և ԵԱՏՄ անդամ երկրների հետագա այնպիսի ռազմավարություն, որը ուղղված կլինի ազգային տնտեսությունների խթանմանը, այդ թվում հարկային օրենսդրության բարելավմանը:
2. ՀՀ-ում դեռևս գոյություն ունեն ոլորտներին տրամադրված առևտրային բանկերի վարկավորման հետ կապված խնդիրներ, մասնավորապես, առևտրային բանկերը 2015-2017 թթ վարկավորել են արդյունաբերության, առևտրի և շինարարության ոլորտները, սակայն վերջիններիս համախառն ավելացված արժեքները ցածր են եղել այն ոլորտներից՝ ծառայություն, գյուղատնտեսություն, որոնց առևտրային բանկերը չեն վարկավորել, հետևաբար վերոնշյալ ոլորտների վարկավորումը կարող է բերել զբաղվածության մակարդակի բարձրացմանը, նոր աշխատատեղերի ավելացմանը, արտագաղթի կրճատմանը, տեղական արտադրության արտահանման ավելացմանը, նոր շուկաների գրավմանը, ինչպես նաև երկրի վարկանիշի բարձրացմանը:
3. Կատարված ռեգրեսիոն վերլուծության արդյունքները, ցույց են տալիս, որ ՀՀ-ում համախատն ներքին արդյունքի վրա դրական ազդեցություն է ունեցել պարենամթերքի արտահանումը, իսկ բացասական ազդեցությունն արտացոլվել է հարկային բեռի գործոնի առումով, որը հիմանորովել է նրանով, որ գյուղատնտեսության ոլորտը բավականին խնդիրներ ունի կապված պետական աջակցման անբավարար մեխանիզմների զարգացվածության հետ՝ գյուղատնտեսական կոլեկտիվների ոչ մասսայականությունը, ֆինանսավորման մեխանիզմների անհասանելիությունը, բնակլիմայական պայմանները, ապահովագրական պայմանների բացակայությունը, ուստի առաջարկվել է կիրառել այնպիսի գործիքակազմ (հարկային արտոնությունների տրամադրումը,մաքսային ընթացակարգերի պարզեցումը, օրենսդրական դաշտի կայունացումը), որոնք հնարավորություն կտան պետություն–բիզնես–քաղաքացիական հասարակություն արդյունավետ համագործակցությանը,ինչ էլ կբերի տնտեսական ակտիվության բարձրացման՝ եկամուտների ավելացում, զբաղվածության մակարդակի բարձրացում, արտահանման ավելացում, աղքատության մակարդակի կրճատում:
4. ՀՀ-ում փոխարժեքի փոփոխությունը ավելացրել է ներմուծումը, սակայն նվազեցրել է արտահանումը, արդյունքում արտահանման նվազման միտումը պայմանավորված է եղել այդ

ժամանակահատվածում դրամ/դոլար փոխարժեքային կուրսերի տատանումներով,ուստի արտահանումը երկրի տնտեսության վրա նշանակալի ազդեցություն դեռևս չունի: Այդ առումով առաջարկվում է իրականացնել հասցեական այնպիսի միջոցառումներ, որոնք կբարելավվեն ներքին արտադրողի պաշտպանվածության աստիճանը, հայրենական արտադրանքի մրցունակության ապահովմանը, վերջիններիս իրականացման համար անհրաժեշտ է հարկային արտոնություններ տալ հատկապես այն ոլորտների զարգացման համար,որոնք ունեն ռազմավարական նշանակություն և մրցունակ են ոչ միայն երկրի ներսում, այլ նաև կարող են լուրջ մարտահրավերներ ստեղծել տարածաշրջանային երկրներում նոր շուկաներ գրավելու համար:

5. Կիրառելով MAX-MIN մեթոդը հաշվարկվել է, որ տնտեսական ակտիվության մակարդակի լրացուցիչ 1.7% ավելացումը կարող է բերել զբաղվածության մակարդակի 27.04 տոկոսային կետի ավելացման, այսինքն՝տնտեսական ակտիվության մակարդակի հետագա բարձրացումը կբերի բնակչության սոցիալ- տնտեսական խնդիրների լուծման, զբաղվածության մակարդակի ավելացման, աղքատության մակարդակի կրճատման, կբարձրանա բնակչության կենսամակարդակը, վերջինիս մակարդակի բարձրացումը կխթանի ներդրումների ներգրավմանը, օտարերկրյա ներդրողները հանդես կգան նոր ներդրումային ծրագրերով, որն էլ կբերի գործարար միջավայրի բարելավմանը:

6. ՀՀ-ում դեռևս գոյություն ունեն հագուստի ոլորտի մրցունակության բարձրացմանը խոչընդոտող այնպիսի ռիսկեր, ինչպիսիք են՝ հարկային բեռի բարձր մակարդակը, պետության կողմից վարվող քաղաքականությունը, վարկային տոկոսադրույքը, փոխարժեքային կուրսի կառավարումը, իհարկե վերջիններիս էլ իրենց բացասական հետևանքներն են ունենում սոցիալական հատվածի վրա, ուստի առաջարկվել է իրականացնել այնպիսի կանխարգելիչ միջոցառումներ, ինչպիսիք են՝ վարկային տոկոսադրույքի նվազեցումը, առաջիկա 3 տարում թեթևացնել հարկերը այն ընկերությունների համար, որոնք զբաղվում են այս ոլորտով, ինչպես նաև ստեղծել այնպիսի միասնական կառույց, որը օտարերկրյա ներդրողին հնարավորություն կտա հավաստի և համակարգված տեղեկատվություն այս ոլորտի մասին,ուստի վերջիններիս իրականացումն էլ կբերի այնպիսի հնարավորություններ, ինչպիսիք են՝ գործազրկության մակարդակի կրճատումը, հագուստի ոլորտում ստվերի ծավալների կրճատումը,հագուստի ոլորտում մրցակցության թերացումների կրճատումը,զբաղվածության մակարդակի բարձրացումը, կայուն պահանջարկի ապահովումը, ներմուծման փոխարինման քաղաքականությունը,միջազգային համագործակցության կապերի ընդլայնումը, այս ապրանքների նոր խորշերի գրավումը, երկրի վարկանիշի բարձրացումը, վերջիններիս առկայությունն էլ կբերեն մոտիվացիայի բարձրացման, որը գործարարին դրդում է զբաղվել բիզնեսով և զարգացնել տնտեսության զարգացման ուղղություն համարվող ոլորտներից մեկը, ինչպիսին է հագուստի արտադրության ոլորտը:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Kyureghyan Arpine Mekhak, «The issues of the factors impact on the business climate», XXXIII International Scientific and Practical Conference “Europen Research: Innovation in science, Education and Technology”, 8-9 November, LLC «OLIMP» PUBLISHING HOUSE «PROBLEMS OF SHIENCE» Moscow.Russia, 2017., pp. 37-42:
2. Kyureghyan Arpine Mekhak., «The Approaches of management for business environment in the RA», Web of scholar N 4 (22), Vol. 3 April RS Global Sp. z O.O., Scientific Educational Center Warsaw, Poland 2018 pp.19-21:
3. Kyureghyan Arpine Mekhak, «The mechanisms of business environment», "Development and Current Issues in Modern Science".N 3(10) March, Magnitogorsk, 2018 pp. 18-23.
4. Kyureghyan Arpine Mekhak «Factor analysis contribuding to the development of business environment abroad and its application capabilities in the Republic of Armenia», Economics, № 6(30), Warszawa, Polska, 2019 pp. 18-20:
5. Կյուրեղյան Արփինե Մեխակի, «Գործարար միջավայրի վրա ազդող գործոնների հարցի շուրջ», «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, N 4, Երևան 2017թ., էջ 72-76:
6. Կյուրեղյան Արփինե Մեխակի, «ՀՀ սոցիալ-տնտեսական գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ գործարար միջավայրի բարեփոխման գերակայությունների համատեքստում», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի հանրապետությունում»,Գիտական հոդվածների ժողովածու ՄԱՍ 1, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» հրատ. Երևան 2018թ., էջ 107-112:
7. Կյուրեղյան Արփինե Մեխակի, «Գործարար միջավայրի բարելավման մոտեցումները Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական զարգացման համատեքստում» «Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ» Գիրք 11, «ՕՐ–ԴԱՐ» հրատ. Երևան 2018թ., էջ 76-83:
8. Կյուրեղյան Արփինե Մեխակի, «Տնտեսական զարգացման առաջնահերթությունների գնահատման մեխանիզմները գործարար միջավայրի բարելավման համատեքստում» «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ. Որոնումներ, հեռանկարներ, լուծումներ»: Գիտական հոդվածների ժողովածու - 1(2) - Գ.Վ. Պլեխանովի անվ. ՌՏՀ Երևանի մասնաճյուղի հրատ., Երևան, 2019թ, էջ 207-215:

АРПИНЕ МЕХАКОВНА КЮРЕГЯН

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ БИЗНЕС-СРЕДОЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08. 00.02 – “Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 7-ого июль 2020 года в 13^{30} часов, на заседании Специализированного совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Х.Абовяна 52.

Р Е З Ю М Е

Основной **целью** исследования является выявление социально-экономических проблем управления бизнес-средой и для решения этой задачи были поставлены следующие **задачи**:

- изучить структуру и особенности бизнес-среды;
- внедрить факторный анализ факторов, способствующих развитию бизнес-среды;
- сравнить факторы, способствующие развитию бизнес-среды за рубежом, и возможности ее применения в РА;
- координировать реформы в социально-экономических процессах Республики Армения в контексте деловой среды;
- разработать механизмы оценки приоритетов экономического развития в контексте бизнес-среды;
- координировать приоритеты экономического развития и улучшения деловой среды в Республике Армения.

Предметом исследования является бизнес-среда Армении, а **объектом** - социально-экономические вопросы управления бизнес-средой.

Основные научные результаты исследования имеют теоретическое и практическое значение, **научная новизна** которых заключается в следующем:

1. В результате макроэкономических показателей Армении обоснованы факторы, способствующие и препятствующие деловой среде, а также выделены риски и угрозы в реальном секторе экономики, с предложеием внедрить инфраструктурные реформы для их сокращения.
2. Оценено влияние экспорта продовольственной продукции и налоговой нагрузки на валовой внутренний продукт, и были обозначены подходы к расширению сотрудничества государство-бизнес-гражданское общество.
3. С целью повышения уровня занятости в Армении было предложено стимулирование деловой активности в сферах, имеющих более высокую стоимость (сельское хозяйство, производство одежды), а также механизмы реализации политики импортозамещения в этих сферах.

ARPINE MEGHAK KYUREGYAN

THE SOCIAL-ECONOMIC ISSUES OF BUSINESS ENVIRONMENT MANAGEMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PhD of economics in the field 08. 00.02 “Economics, Management of the Economy and its Branches”

The defense of the dissertation will take place on 7 July, 2020, at 13^{30}, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.
Address: 52 Abovyan str., Yerevan, 0009, Armenia

S U M M A R Y

The main **goal** of the dissertation is to identify the socio-economic problems of business environment management and to address this objective, the following **objectives** have been set:

• to explore the business environment and its characteristics,

• to implement factor analysis on factors contributing to the development of business environment

• to compare the factors contributing to the development of the business environment abroad and the opportunities for its application in the RA;

• to coordinate reforms in the socio-economic processes of the Republic of Armenia in the context of the business environment;

• to develop mechanisms for assessing economic development priorities in the context of the business environment;

• to coordinate the priorities of economic development and improvement of the business environment in the Republic of Armenia.

The main **object** of the study is the business environment of Armenia and the **subject** of research is the socio-economic issues of business environment management.

Main scientific results of the study have theoretical and practical significance, **scientific novelty** of which is as follows:

1. As a result of macroeconomic indicators of Armenia factors contributing and hindering business environment have been substantiated, Risks and threats in the real sector of the economy, suggesting implementing infrastructure reforms to reduce them.
2. The impact of food export and tax burden on gross domestic product has been assessed, and approaches to expanding the frameworks of state-business-civil society cooperation have been outlined.
3. In order to increase the level of employment in the Republic of Armenia, it was suggested to stimulate business activity in higher value sectors (agriculture, clothing production) and implement mechanisms of import substitution policy in these sectors.